



ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ակումբների արտոնագրման համակարգը գործողությունների մի նախագիծ է, որը մշակված է Իռլանդական ֆուտբոլային ասոցիացիաների արտոնագրման բաժինների կողմից: Այս համակարգը ծառայում է որպես ուղեցույց բաժինների ջանքերին՝ շարունակաբար զարգացնելու ֆուտբոլի բոլոր բնագավառները Հյուսիսային Իռլանդիայում:

Իռլանդական Ֆուտբոլային Ասոցիացիայի (ԻՖԱ) արտոնագրման համակարգը առաջադիմական է եւ մշակված է հյուսիսիռլանդական ակումբների մակարդակը բարձրացնելու համար, ինչը թույլ կտա նրանց լինել ֆիզիկապես ավելի պատրաստված եւ ֆինանսապես մրցունակ ինչպես խաղադաշտում, այնպես էլ դրանից դուրս: Բազմաթիվ կազմակերպությունների հետ անցկացրած խորհրդատվություններից հետո ԻՖԱ-ի Գործադիր կոմիտեն համաձայնվեց արտոնագրման որոշակի չափանիշների կիրառման գաղափարի հետ:

Չափանիշները ստեղծվել էին Հյուսիսային Իռլանդիայի եւ ընդհանրապես Եվրոպայի ակումբների խաղային ստանդարտների հավասարեցման նպատակով: ԻՖԱ-ի Գործադիր եւ Արտոնագրային կոմիտեներն իրավունք ունեն վերանայելու այդ չափանիշներն շարունակական (աննդհատ) հիմքով, ինչպես նաեւ անել առաջարկներ դրանց հետագա առաջխաղացման վերաբերյալ: Ակումբների արտոնագրման համակարգը վերաբերում է ինչպես ազգային, այնպես էլ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին եւ բաժանված է հետեւյալ մասերի.

1. Արտոնագրման համակարգի նկատմամբ ասոցիացիայի պարտավորությունների հաստատում;
2. Ակումբների արտոնագրման համակարգի կառավարում;
3. Տեսություն եւ գնահատում.
 - ա) արտոնագրման համակարգ ներգրավված ակումբների;
 - բ) ԻՖԱ-ի արտոնագրման համակարգի:

Արտոնագրման չափանիշները կազմվել էին մեծ խնամքով եւ ուշադրությամբ: Զգալի ուշադրություն էր դարձվել մի շարք ստանդարտների, որոնք հիմնաքարային են ֆուտբոլի զարգացման համար թե Հյուսիսային Իռլանդիայում, թե Եվրոպայում, եւ որոնց հիման վրա ակումբները կարող հստակ գնահատվել: Հինգ չափանիշները, որոնց ակումբները պետք է համապատասխանեն եւ ըստ որոնց պետք է գնահատվեն.

- Մարզական չափանիշներ;
- Ենթակառուցվածքային չափանիշ;
- Կադրային եւ վարչական չափանիշներ;
- Իրավական չափանիշներ;
- Ֆինանսական չափանիշներ:

Այդ չափանիշները համատեղելի են ինչպես ՈՒԵՖԱ-ի (կիրառելի դեպքերում) ստանդարտների հետ եւ բնորոշ են Հյուսիսային Իռլանդիային ֆուտբոլի համար:

Արտոնագրման համակարգի նկատմամբ ասոցիացիայի պարտավորությունների հաստատում

ԻՖԱ-ի արտոնագրման կոմիտեն ու բաժինը հաստատում են արտոնագրման համակարգի ստանդարտները: ԻՖԱ-ն գիտակցում է իր պատասխանատվությունն իռլանդական պրեմյեր-լիգայի ակումբների առջև եւ նրանց մատուցում է լավագույն ծառայությունն ինչպես նրանց, այնպես որչ երկրի ֆուտբոլային էնտուզիաստներին:

Արտոնագրման բաժինը զբաղվում է արտոնագրման համակարգի շարունակական զարգացմամբ: Յուրաքանչյուր տարվա վերջում բաժինը գնահատում է արտոնագրման համակարգն, ինչը թույլ է տալիս ապահովել համապատասխանելիությունն ինչպես սեփական, այնպես էլ ՈՒԵՖԱ-ի նպատակներին: Անհրաժեշտ քայլերը ձեռնարկվում են թերությունների ուղղման վրա ցանկացած ոլորտում, ուր համակարգը չի հասել իր նպատակներին:

Արտոնագրման բաժինը ստեղծել է համեմատական վերլուծությունների համակարգ, որը թույլ է տալիս ակումբներին պարզ տեղեկանալ Հյուսիսային Իռլանդիայի եւ Եվրոպայի ֆուտբոլային ոլորտում իրենց դիրքի մասին; համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ակումբներին ավելի արդյունավետ պլանավորել իրենց ապագան:

Արտոնագրման գործընթացը թափանցիկ է, ինչը թույլ է տալիս արտոնագրման բաժնին ցուցադրել բոլոր շահագրգիռ կողմերին (ակումբներին, հասարակությանը, ֆուտբոլային ղեկավար մարմիններին եւ այլն), որ բաժինը հավատարիմ է մնում բարձր էթիկական ստանդարտներին: Արտոնագրման համակարգ անմիջականորեն ներգրավված է գաղտնի տեղեկատվության հետ առնչվող բոլոր աշխատակիցները ստորագրում են գաղտնապահության հայտարարագրեր, ինչպես նաեւ հաստատում են իրենց անկախությունն արտոնագրային յուրաքանչյուր նիստից առաջ:

Արտոնագրման համակարգի կառավարման համար ԻՖԱ-ն առաջարկում է իր ռեսուրսների զգալի մասն ու տարվա ընթացքում հասանելի է դարձնում զգալի քանակով ֆինանսական նախաձեռնություններ, որոնցից կարող են օգտվել ակումբները: Բաժինը համալրված է որակյալ եւ կոմպետենտ մասնագետներով, ովքեր որչ արտոնագրային գործընթացի ժամանակ կառավարում են համակարգն ու օժանդակում ակումբներին:

Ակումբների արտոնագրման համակարգի կառավարում

Արտոնագրման բաժինը կառավարում է ԻՖԱ-ի ակումբների արտոնագրման համակարգը բոլոր այն ակումբների նկատմամբ, որոնք մասնակցում են իռլանդական պրեմյեր-լիգային եւ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին:

Արտոնագրման համակարգի հաջողությունը հիմնականում կախված է զուգահեռաբար գործող 2 սկզբունքներից. արտոնագրման համակարգ ներգրավված ակումբներ եւ արտոնագրման բաժին, որն իրականացնում է անհրաժեշտ օժանդակություն, որն էլ ակումբներին թույլ է տալիս հասնել իրենց վերջնական նպատակին արտոնագիր ստանալու հարցում:

ԻՖԱ-ի արտոնագրման բաժինը մշակում է (կիրառելի դեպքերում՝ նաեւ ՈՒԵՖԱ-ի հետ) բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն արտոնագրի համար դիմող եւ դրան արժանացող ակումբների համար: Արտոնագրման կոմիտեի հայեցողությամբ, ակումբներին տրամադրվում է որոշակի ժամանակ: Նորընծա ակումբներին արտոնագրման համակարգի պահանջները կատարելու համար տրամադրվում է նույն ժամանակահատվածն, ինչպես նաեւ անհրաժեշտ օժանդակություն: Այնուամենայնիվ, ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մասնակցության բոլոր պարտադիր պահանջները մնում են կիրառելի բոլորի համար:

Բաժինը պարբերաբար շփվում է ակումբների հետ շրջաբերականների, էլեկտրոնային փոստի, նամակագրության, տեղում ստուգումների եւ այլ միջոցներով: Ինքն ԻՖԱ-ում տարածվում են տեղեկագրեր եւ ծառայողական գրություններ, ինչը թույլ է տալիս աշխատակիցներին լինել իրազեկված արտոնագրման համակարգի բոլոր սկզբունքների եւ տարվա ընթացքում կատարվող բոլոր փոփոխությունների վերաբերյալ: Արտոնագրման բաժնի գրասենյակում ապահովում է ակումբների

կողմից տրամադրվող բոլոր փաստաթղթերի անվտանգ պահպանումը: Բացի այդ, էլեկտրոնային տեղեկատվությունը պահվում է հատուկ արտոնագրային թղթապանակներում, որոնք նաև պահվում են ԻՖԱ-ի սերվերի վրա՝ համակարգչային համակարգի վնասման դեպքում կիրառելու համար:

Արտոնագրման համակարգին վերաբերող ողջ տեղեկատվության հետ բաժինը վարվում է պատշաճ կերպով եւ գաղտնապահության շրջանակներում: Արտոնագրման համակարգ ներգրավված բոլոր անձինք ստորագրում են գաղտնապահության համաձայնագրեր մինչև իրենց բուն գործունեությանն անցնելը: Արտոնագրման համար դիմած յուրաքանչյուր ակումբ, որը դեռ չի ստացել դրա պատճենը, նույնպես ստանում է “գաղտնապահության երաշխիքը” նամակի տեսքով, ուր մատնանշված են լինում արտոնագրման բաժնի կողմից պահպանվող գաղտնապահության բոլոր սկզբունքները:

Ամենամյա հաշվետու ժողովի եւ արտոնագրման կոմիտեի հաշվետվության միջոցով ԻՖԱ-ն կոնկրետ խնդիրներ է դնում ակումբների առաջ, որպեսզի համոզվի, որ արտոնագրման համակարգը կառավարվում է պատշաճ մակարդակով եւ նրա նպատակները բավարարված են:

Արտոնագրման համակարգի տեսություն եւ գնահատում

Պարզ եւ չափելի նպատակներով եւ արդյունքներով համակարգի խթանման նպատակով, ակումբների արտոնագրման բաժինը մշակել է համեմատական վերլուծությունների համակարգ, որը թույլ է տալիս բաժնին ամբողջությամբ դիտարկել եւ գնահատել արտոնագրման համակարգի աշխատանքը: Համեմատական վերլուծությունների համակարգը արտոնագրման բաժնին նաև թույլ է տալիս տեսնել, թե ինչպես են արտոնագրի համար դիմող, ինչպես նաև լիգայում հանդես եկող մյուս ակումբները համապատասխանում չափանիշներին, որոնցով նրանք ստուգվել են: